ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 24.10.2016թ. ԹԻՎ 443-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 3 նոյեմբերի 2016թ.,

(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>

Ա. Ղազարյան ԿՎԲ պետ

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>

Վ. Խաչատրյան ԿՎԲ հրահանգիչ

Ա. Մստոև ԿՎԲ գլխավոր մասնագետ

<u>Հանձնաժողովի քարտուղար</u>

Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

<u>Օրակարգ՝</u>

1. *<<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(3)-16>>* ծածկագրով <<ՕԵԿ կարգավարների ընդհանուր մասնագիտական վերապատրաստման դասընթացների>> կազմակերման ծառայությունների գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.

2. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն գնման առարկայի նախահաշվային գինը՝ մեկ մասնակցի համար նախատեսված առավելագույն գինը՝ 1 990 000 ՀՀ դրամ:

Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ «ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ, ՉՀ, ք. Պրահա 8, Չերնեհo 427/6, էլ. հասցեն՝ almond@seznam.cz,Հեռ. +420603570805;

Արձանագրվեց, որ «ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ կողմից հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան:

Այնուհետև հանձնաժողովը բացեց «ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ կողմից ներկայացված ծրարը և արձանագրեց, որ ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին և հրապարակեց «ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ մեկ մասնակցի համար նախատեսված գնային առաջարկը՝ 3740 եվրո *(ՀՀ Կենտրոնական Բանկը 03.11.2016թ. ժամը 11:30 դրությամբ մեկ եվրոյի համար սահմանել է 527.28 ՀՀ դրամ փոխարժեք, հաշվի առնելով նշված հանգամանքը՝ «ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ-ի գնային առաջարկը մեկ մասնակցի համար կազմում է 1 972 027.2 ՀՀ դրամ):*

Տեղեկացվեց նաև, «ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ-ն հայտով արդեն իսկ ներկայացրել է <<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(3)-16>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1. <<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(3)-16>> ծածկագրով <<ՕԵԿ կարգավարների ընդհանուր մասնագիտական վերապատրաստման դասընթացների>> կազմակերման ծառայությունների գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԱՏՏ ԱԼՄՈՆԴ» ՓԲԸ -ին:

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ ՊԵԿ ներկայացնել *<<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(3-16>>* գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը,

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 14.11.2016թ. ժամը 11.30 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա. Ղազարյան		Հանձնաժողովի նախագահ
Վ. Խաչատրյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Մստոև		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար